Երկրորդ ենթագլխում **«Յայաստանի
Յանրապետության և Յայաստանյայց առաքելական
սուրբ Եկեղեցու հարաբերություններին
իրավական հայեցակետերը պետության
աշխարհիկության սկզբունքի իրականացման
համատեքստում»** հետազոտության են ենթարկվում
Յայաստանի Յանրապետության և Յայաստանյայց
առաքելական սուրբ Եկեղեցու իրավա-
հարաբերությունները՝ պետության
աշխարհիկության լույսիներթո: Աշխատանքի այս
հատվածում ատենախոսը պետության-Եկեղեցի
հարաբերություններին համալիր վերլուծության
խորապատկերում վերարժևորում է Յայաստանի
Յանրապետությունում աշխարհիկ պետության
հայեցակարգի անհրաժեշտությունը:
Միաժամանակ, սահմանադրական նոր կարգա-
վորումներին լույսիներթո հստակեցվում են
պետության և Եկեղեցու նոր
հարաբերություններին շրջանակը, ինչպես նաև
առաջադրվում է «ազգային Եկեղեցի»
սահմանադրաիրավական եզրույթի սահմանման
հեղինակային մոտեցումը:

Եզրակացություններում ամփոփ տրվում են
հետազոտության հիմնական արդյունքները, որոնք
ներկայացվում են ստորև:

1. Աշխարհիկ պետության գաղափարը վաղ
միջնադարից հասունացած և Եվրոյուցին
զարգացման ուղիանցած քաղաքակրթական արժեք է,
որին շնորհիվ մշակույթը, գիտությունը,
իրավունքը, հասարակական կյանքը
ձեռքագտավեցին կրոնական միակողմանի
մոտեցումներին և վերջինիս՝ պետական
կառավարման, ինչպես նաև քաղաքականության վրա
ունեցած ահռելի դերակատարությունին:

2. Թեև աշխարհիկ պետության առաջացումը, մեծ
մասամբ, նախանշվեց Եկեղեցու դեմ պայքարով,
որոշ դեպքերում վերածվելով նույնիսկ

աստվածանարգութեան, այդուհանդերձ, իր
Էութեամբ, այդպիսի պետութեանը չդիտարկվեց
աստվածամերժական, այլ սահմանազատելով
պետական և կրոնական ուժերունը՝ դարձավ մտքի և
խղճի ազատութեան իրավունքի ապահովման
հուսալի պատվար:

3. Պետութեան և եկեղեցու առանձնացումը՝
որպես աշխարհիկ պետութեան գաղափարի
կենսագործման հիմք, առաջին անգամ ամրագրվեց
Ֆրանսիայի Զանրապետութեան իրավունքի
նորմերում՝ կանխորոշելով դրա հետագա
տարածումը աշխարհի բազմաթիվ երկրներում:

4. Զայկական պետութեանը անցել է միմյանց
տրամագծորեն հակադրվող շրջափուլեր՝ դրանցից
յուրաքանչյուրում ունենալով իր
ձեռքբերումները և կորուստները:
Քրմապետութեան տարանջատումը արքայի
պաշտոնից առաջին կառուցվածքային տեղաշարժը
եղավ աշխարհիկ և հոգևոր իշխանութեան ներքին
ամենաբարձր կետում, որով և ավարտվեց
աստվածապետութեան երկարատև շրջանը:
Վերլուծելով Զայկական պետութեան և կրոնի
հարաբերակցության հիմնախնդիրներն ու
էվոլյուցիոն գարգացման
առանձնահատկությունները, պայմանականորեն
սահմանվել են այդ հարաբերություններին
պատմաիրավական հետևյալ շրջափուլերն ու դրանց
նշանակությունը՝

ա) հին Զայաստանի աստվածապետական շրջան (մ.թ.ա.
XXVII դ. - մ.թ.ա. VI դ.), երբ պետութեանը սերտաճում էր
կրոնական դասի հետ, բայց լինելով նրանից անջատ:
Այդ շրջանը վկայում էր թագավորական
իշխանութեան հովանավորությունը վայելող
քրմական դասի կողմից միապետի բացարձակ
իշխանութեանը նդունման մասին,

բ) թագավորի և քրմապետի պաշտոններին
առանձնացման շրջան (սկսած՝ մ.թ.ա. VI դ.), երբ
պետութեանը վերահսկողության տակ էր
վերցնում ամբողջ հոգևոր դաշտը սահմանելով
կրոնը՝ որպես իշխանության լծակներից մեկը,
պայքարում այլախոհության դեմ: Այս շրջանում
խոսք էր կարող գնալ աշխարհիկ պետութեան
ժամանակակից իրավաբանական մասին, սակայն

քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու քաղաքական ակտիարդյունքում էլ ավելի խորացավ պետության ազդեցությունը կրոնի նկատմամբ, ինչն իր հերթին աշխարհիկ պետության զարգացման վրա հետագայում էական նշանակություն ունեցավ,

գ) քրիստոնեության՝ որպես պետական կրոնի ճանաչման շրջան (մ.թ. IV դ. - XIV դ.), երբ պետությունը իր հովանու տակ առնելով քրիստոնեությունը, որոշ բացառություններով, իսկ եկեղեցու հետ հաստատեց գործընկերային հարաբերություններ՝ պայքարելով կրոնական բազմակարծության և այլ ախոհական դրսևորումների դեմ: Միաժամանակ, պետական մակարդակով սկսվեց քրիստոնեության տարածումը, եկեղեցին դարձավ տաճարական սեփականության իրավահաջորդը՝ ներպետական և արտաքին քաղաքականության մշակման և իրականացման գործում տիրապետելով առանցքային դերակատարության: Սակայն, դառնչինչ չփոխեց աշխարհիկ և հոգևոր իշխանություններին

փոխհարաբերություններում: Այս շրջանում, նույնպես խոսք էր գնում աշխարհիկ պետության ժամանակակից իրավաքննչական մասին, քանի որ, եթե կրոնի նկատմամբ պետության ազդեցության շրջանակներն էլ ավելի էին մեծանում, ապա դա ենթադրում էր միայն աշխարհիկ պետության զարգացման վրա բարենպաստ գործունեորի ու պայմանների առկայություն,

դ) Յայաստանի առաջին Յանրապետության ժամանակաշրջան (1918-1920 թթ.), երբ պետության, կրոնի և իրավունքի հարաբերակցության մասով որակապես նոր իրադրություն ստեղծվեց, երբ վեցդարյա պետության բացակայությունից հետո վերստին հիմնադրվեց հայոց պետականությունը: Միաժամանակ, այս ժամանակաշրջանում, առաջին անգամ փորձ արվեց պետության և եկեղեցու իրավական հարաբերություններին կարգավորման համար մշակել «Յայաստանյայց Առաքելական Մայր եկեղեցու և Յայաստանի Յանրապետության միջև դաշնագրի» նախագիծը, որի բովանդակային տրամաբանությունից էր բխում հենց եկեղեցու և

պետություն փոխգործակցության
անհրաժեշտությունը: Միաժամանակ, այս շրջանը
նախանշվեց պետակեղեցական
փոխհարաբերություններին ակտիվ կառուցմամբ, և
այսօր՝ առավել քան երբևէ, կարևոր գործնական
նշանակություն ունի այս շրջանի
պետակեղեցական ոլորտում կուտակած փորձի և
ձեռքբերումներին վերաբերվող և
արտացոլումը պետություն-եկեղեցի
հարաբերություններին արդի հայեցակարգում:

ե) Աթեիզմի խորհրդային շրջան (1920-1990 թթ.), երբ
խորհրդային Միություն Սահմանադրությունը թեև
երաշխավորում էր ցանկացած կրոն դավանելու կամ
ոչ մի կրոն չդավանելու իրավունքը,
այդուհանդերձ, պետության վարած
քաղաքականությունը, այս ոլորտում, տուրք էր
տալ իսաթեիստական քարոզչության ծավալմանը՝
խախտելով մարդկանց սահմանադրորեն ամրագրված
խղճի ազատության իրավունքը: Միաժամանակ, այս
ժամանակաշրջանում պետության և եկեղեցու
հարաբերություններում նկատվեցին ոչ միայն
աշխարհիկ պետության վերաբերյալ բացարձակ
մոտեցումներ, այլև պետական աթեիստական
քաղաքականության արդյունքում եկեղեցու
դերակատարումը հայ ժողովրդի հոգևոր կյանքում
միտված էր անկման,

զ) աշխարհիկ պետության ժամանակակից փուլ (1991
թ.-ից մինչև մեր օրերը), երբ պետության
անկախության ձեռքբերումը օրակարգային
դարձրեց պետության և կրոնական
կազմակերպություններին միջև նոր
փոխհարաբերություններին վերստեղծումը: «Խղճի
ազատության և կրոնական
կազմակերպություններին մասին» ՀՀ օրենքը իր
նախաբանում, Հայաստանյայց Առաքելական Սուրբ
Եկեղեցուն վերապահեց ազգային եկեղեցու
կարգավիճակ, որը իր սահմանադրաբանական
ամրագրումը ստացավ Սահմանադրության 2005,
այնուհետև 2015 թվականներին
փոփոխություններով՝ պետության
աշխարհիկությունը դիտարկելով
սահմանադրական կարգի առանցքային
սկզբունքներից մեկը: Միաժամանակ, այս

Ժամանակափոփոխումը Զայաստանի
Յանրապետությունը հռչակվեց աշխարհիկ
պետություն, որտեղ յուրաքանչյուր ոք ունի
մտքի խղճի, կրոնի ազատության, անկախ կրոնի
նկատմամբ ունեցած վերաբերմունքից և կրոնական
պատկանելությունից և համոզմունքներից
օրենքի առջև հավասարության իրավունք:
Պետության զարգացման նման ձևաչափը համադրելի
է ժողովրդավարական, ինքնիշխան, իրավական
պետության կառուցման ազգային տեսլականի հետ:

5. Կրոնի նկատմամբ որդեգրած պետական
քաղաքականության, կրոնական
կազմակերպությունների իրավական
կարգավիճակի սահմանման, իրավական
համակարգում կրոնական նորմերի և դոգմաների
պոզիտիվացման կամ դրանց
անթույլատրելիության տեսանկյունից,
պայմանականորեն առանձնացվել են պետության և
կրոնի փոխհարաբերությունների դրսևորման
հետևյալ տիպերը՝ ա) աստվածապետություն
(թեոկրատիա), բ) կրոնապետություն
(կղերապետություն), գ) աթեիստական պետություն,
դ) կիսակրոնական կամ կիսաաշխարհիկ
պետություն, ե) աշխարհիկ պետություն:

Ա. Աստվածապետությունը կամ թեոկրատիան՝
որպես կրոնական և քաղաքական ուժերի
հարաբերությունների համակարգ, դիտարկվում է
պետության այնպիսի ձև, որտեղ կրոնական
կազմակերպություններից մեկը հանդիսանում է
որպես պետական իշխանություն և ունի իշխանական
իրավասությունների իրականացման որոշակի
նպատակներ, խնդիրներ, գործառնություններ և
մեթոդներ: Այլ կրոնական
կազմակերպությունների գործունեությունն ու
այլակարծությունն արգելվում կամ ենթարկվում
է հակաձանքների:

Բ. Կրոնապետությունը կամ կղերական
պետությունը ենթադրում է պետական
իշխանության կազմակերպման այնպիսի
կառուցակարգ, որտեղ կրոնական
կազմակերպություններից որևէ մեկն օժտված է
պետաիշխանական լիազորություններով:
Միաժամանակ կրոնապետությունում, որպես

կանոն, սահմանվում է պետական կրոն, իսկ կրոնական առաջնորդները ընդգրկվում են պետական իշխանության մարմիններում, կամ վերջիններին ներկայացուցչներին շնորհվում է նաև կրոնական կարգավիճակ:

4. Կիսաաշխարհիկ կամ կիսակրոնական պետության ձևի առաջադրումը պայմանավորված է որոշ պետության ներքին՝ աստվածապետական, աթեիստական, կրոնական կամ աշխարհիկ ձևերի շարքին դասելու անհնարինության հետ: Մեր դիտարկմամբ, կիսակրոնական կամ կիսաաշխարհիկ պետությունը կրոնի և պետության փոխգործակցության համատեքստում միջանկյալ օղակ է կղերապետության և աշխարհիկ պետության ձևերի միջև: Կիսաաշխարհիկ պետություններում կրոնական կազմակերպություններից մեկն ունի պաշտոնապես սահմանված արտոնյալ դիրք և պետության կողմից արժանանում է որոշակի նախապատվության: Սահմանադրությունում և օրենսդրական ակտերում ամրագրվում է պետության կախվածությունը կրոնական կազմակերպությունից և հակառակը: Կիսաաշխարհիկ կամ կիսակրոնական պետությունը՝ նման աշխարհիկ պետության, ճանաչում և երաշխավորում է խղճի և դավանանքի ազատության իրավունքը:

7. Աշխարհիկ պետությունները կրոնի հանդեպ դրսևորած վարքագծով միատեսակ չեն և առաջնորդվում են կուտակած ազգային, կրոնական, մշակութային սովորույթներով, ավանդույթներով, որոնք էլ, ըստ երկրան, նախանշում են նրանց ազգային բարոյական նախահիմքն ու նկարագիրը: Աշխարհիկության սկզբունքի իրավական ամրագրումը դեռևս լիարժեք չի երաշխավորում դրան շեղ իրացումն ու կենսագործումը: Յատկապես դավերաբերում է այն պետություններին, որտեղ կրոնական կազմակերպություններին մեկն ավանդաբար շոշափելի մասնակցություն է ունեցել տվյալ պետության կամ ազգի մշակութային, բարոյական, արժեքային համակարգի կայացման և զարգացման գործում:

6.33 Սահմանադրու թյան 17.18,41և այլ հոդվածներին համակարգային վերլուծությունից կատարվել է հետևյալ եզրահանգումները.

ա) յուրաքանչյուրի մտքի ազատությունը առաջին հերթին ուղղված է հենց մարդու մտքի՝ որպես մտածողության արդյունքի միջոցով շրջակա աշխարհը ճանաչելու և այդ աշխարհում իր պատկերացումները, հայացքները, կարծիքները, համոզմունքներն ազատ արտահայտվելու հետ: Սակայն, գիտական հետազոտության առարկայի շրջանակում անհրաժեշտ է կարևորել այն, որ սեփական գիտակցության մտքի ազատությունը բնութագրում է հենց մարդու հոգևոր ազատությունը՝ կազմելով նրա հոգևոր կյանքի հիմքը,

բ) խղճի ազատությունը պայմանավորված է կրոնի հետմարդու առնչությամբ, ինչպես նաև խղճի և այս կամ այն կրոնի դավանություններին միջև նրա բարոյական և իրավական ընտրության հնարավորությամբ: Ընդ որում, այդ ազատությունն առաջին հերթին դրսևորվում է Աստծո հանդեպ համոզմունքի ազատության իրականացման միջոցով, սակայն, այն չի կարելի ընկալել բացառապես կրոնի և աթեիզմի միջև ընտրության ազատություն: Աշխարհիկ պետության սահմանադրական սկզբունքի իրականացման համատեքստում խղճի ազատությունը դրսևորվում է մարդու համոզմունքների բազմազանության և կրոնական համոզմունքների հիման վրա որևէ ձևով անհանդուրժողականության ու խտրականության երևույթներից իրավական միջոցներով պաշտպանվելու հնարավորությամբ,

գ) կրոնի ազատությունը՝ որպես ինքնուրույն կատեգորիա, յուրօրինակ իրավաբանական բովանդակություն է ձեռք բերում խղճի ազատության հետ մեկ միասնական ամբողջության միջոցով, և ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը և դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ և հրապարակավ կամ մասնավոր կարգով՝ քարոզի, եկեղեցական արարողությունների, պաշտամունքի այլ ծիսակատարությունների միջոցով կամ այլ ձևերով արտահայտելու

ազատությունը (հոդվ. 41, մաս 1, 2-րդ նախադասություն):

7. Ժամանակակից իրավունքի արդիականացման պայմաններում քարացած պատկերացումներով և կարծրատիպերով մեկնաբանել պետության աշխարհիկությունը սկզբունքի համատեքստում Յայաստանի Յանարապետության և Յայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունները ոչ միայն անընդունելի է, այլև խիստ վնասակար է՝ հատկապես այն պետությունների համար, որտեղ հոգևոր-կրոնական աշխարհայացքը ազգային դիմագծի ինքնուրույն բաղադրիչ է հանդիսանում: Պետության և Եկեղեցու ամանձնացումը, որը լայն հաշվով ընկած է աշխարհիկ պետության հայեցակարգի հիմքում, չպետք է ընկալել բացահայտ կրոնամերժության կամ ապակրոնականության հիմաստով:

8. Յայաստանյայց առաքելական սուրբ Եկեղեցու՝ որպես «ազգային Եկեղեցու» սահմանադրական կարգավիճակը չպետք է ներհիմաստով նույնականացնել «կրոնական կազմակերպություն» հասկացության իրավական բովանդակության և կազմակերպարավական տեսակի հետ, սակայն, լայն հիմաստով, այն նույնպես կրոնական կազմակերպություն է՝ իր գործունեության հիմքում ունենալով հոգևոր (կրոնական) նպատակներ և գործառնություններ: Միաժամանակ, այս մոտեցմամբ պայմանավորված՝ Յայաստանյայց առաքելական սուրբ Եկեղեցին մյուս բոլոր կրոնական կազմակերպությունների հետ միասին ամանձնացված է պետությունից՝ ուղղակիորեն հաստատելով վերջինիս աշխարհիկ բնույթը, սակայն, անընդունելի է Սահմանադրության 41-րդ հոդվածի ուժով արդեն իսկ ճանաչված ազգային Եկեղեցու իրավասուլթյունությունը և հայ ժողովրդի հոգևոր կյանքում դրա բացառիկ առաքելությունը պայմանավորելու կախման մեջ դնել օրենքով նախատեսված ընթացակարգերից՝ մասնավորապես, երբ խոսքը վերաբերում է նույն Եկեղեցու ստեղծման իրավահարաբերության՝ օրենքի ուժով կարգավորվելու հնարավորության մասին:

9. «Պե տու լ թ յ ու ն -ե կ ե ղ ե ց ի» հարաբերութիւնները կրավական կարգավորման և դրա հետագա կատարելագործմանն ուղղված ձգտումները արտահայտվում են այդ հարաբերութիւններին ստիտուցիոնալ կապի ձևավորման մեջ: Այսպէս, Յայաստանի Հանրապետութիւնում Յայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին չի կարող մեկուսանալ պետութիւնից և հասարակութիւնից ու դասական իմաստով գործել անջատ: Ավելին, Յայաստանի Հանրապետութիւնը այդ կազմակերպութիւններին ամանձնացման հետ մեկտեղ «պետութիւն-եկեղեցի» հարաբերութիւններում որդեգրել է ազգային եկեղեցու հետ հարաբերութիւններին համադրման ձևաչափը, որը, ինչպէս արդեն նշվել է, բնորոշ է նաև արդի ժողովրդավարական, իրավական, աշխարհիկ միջարք պետութիւններին:

10. Աշխարհիկ պետութիւն սկզբունքի կարևոր բաղադրիչներին է կրթութիւնը, որը հանդիսանում է աշխարհիկ պետութիւնում կրթական միջավայրի չեզոքութիւնը, կրոնական համոզմունքների հիմքով խտրականութիւնը բացառման անհրաժեշտ նախապայման, որը ենթադրում է կրոնական քարոզչութիւնը, կրոնական պատկանելութիւնը ամբողջականով գործող խտրականութիւն և պարտադրանքի անթույլատրելիութիւնը:

11. Կրոնական կրթութիւնը վերաբերյալ ամանձին երկրներում որդեգրվել են տարբեր յոյս դիրքորոշումներ, մի դեպքում՝ արգելելով դրանու սուղումը ուսումնական հաստատութիւններում, մեկ այլ դեպքում՝ նախատեսելով դասընթացի դասավանդման համար անհրաժեշտ ֆակուլտատիվ ընթացակարգեր, իսկ ամանձին դեպքերում՝ ամբողջով կրոնական կրթութիւնը պարտադիր դասավանդման անհրաժեշտութիւնը:

12. Յայաստանի Հանրապետութիւնում կարևոր նշանակութիւնը վերապահելով կրթութիւնը աշխարհիկութիւնը սկզբունքին, ինչպէս նաև հաշվի առնելով Սահմանադրութիւնի 81-րդ հոդվածի 1-ին մասի իրավական կարգավորման այն պահանջը, ըստ որի՝ մարդու և քաղաքացու հիմնական

իրավունքներին և ազատություններին վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս անհրաժեշտ է նաև հաշվի առնել Մարդու իրավունքներին եվրոպական դատարանի պրակտիկան, այնուամենայնիվ, անհրաժեշտ է՝ «Հայոց եկեղեցու պատմություն» ամսականի գծով ուսումնական գործընթացների կազմակերպման ու վերահսկողության գործառնությունները վերապահել բացառապես պետական իրավասու մարմնին, իսկ այդ ամսականի պարտադիր ուսուցումը և դրանից հրաժարվելու ընթացակարգերի բացակայությունը կարող է խղճի ու կրոնի ազատության իրացման պատենշ հանդիսանալ այլադավանների շրջանում և աղճատել ինչպես պետության աշխարհիկություն, այնպես էլ՝ կրոնական բազմակարծության սկզբունքի նշանակությունը:

Թեկնածուական առենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված հետևյալ գիտական հրապարակումներում.

1. Հայաստանի Հանրապետությունը որպես աշխարհիկ պետություն. սահմանադրարավական կարգավորման հիմնախնդիրները և համեմատական-իրավական վերլուծություն (մենագրություն) Վ. Թորոսյան.-Եր.: «Մպիկա» 2018. 192 էջ:
2. Աշխարհիկ պետությունը որպես Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի հիմունք // Արդարադատություն, գիտական հանդես, Եր., 2017, N 5(40), էջեր 55-62:
3. Հայաստանի Հանրապետության աշխարհիկ բնույթը սահմանադրական նոր կարգավորումների համատեքստում // Արդարադատություն, գիտական հանդես, Եր., 2017, N 6(41), էջեր 60-63:
4. Պետության աշխարհիկություն սկզբունքի իրացման հիմնահարցերը արտասահմանյան ամանձին երկրների օրենսդրությամբ. համեմատական իրավական վերլուծություն // Եվրոպական Ակադեմիա, գիտական հոդվածների ժողովածու, Եր., 2017, N 8 էջեր 312-333:

5. Պետություն, իրավունքի և կրոնի հարաբերակցության որոշ հիմնահարցեր. պատմաիրավական վերլուծություն // Եվրոպական Ակադեմիա, գիտական հոդվածների ժողովածու, Եր., 2017, N 8 էջեր 296-311:
6. Աշխարհիկ պետության ծագումնաբանական վերլուծություն // Արդարադատություն, գիտական հանդես, Եր., 2018, N 1(42), էջեր 9-14:

ТОРОСЯН ВАГЕ АШОТОВИЧ

**КОНСТИТУЦИОННО-ПРАВОВОЙ ХАРАКТЕР РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ КАК СВЕТСКОГО
ГОСУДАРСТВА: ТЕОРЕТИКО-ПРАВОВОЙ АНАЛИЗ**

Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.02 - «Публичное право». Защита диссертации состоится 24-го марта 2018 года в 12:30 на заседании специализированного совета 041 «Юриспруденции» Академии государственного управления РА ВАК РА (0028, г. Ереван, Киевян 8).

РЕЗЮМЕ

Диссертация посвящена теоретико-правовому анализу конституционно-правовых проблем концепции светского государства в Республике Армения. Концепция светского государства является одной из важнейших достижений истории общества. Она как цивилизационная ценность имеет свое особое место в системе основ конституционного строя Республики Армения и взаимосвязана с остальными элементами этой системы. Без реализации принципа светского государства невозможно выстроить ни полноценного демократического государства, ни правового государства. В этом смысле принципу светского государства, как одной из основ конституционного строя, отводится фундаментальная роль в развитии и прогрессе Республики Армения.

Сегодняшние подходы к понятию светского государства всеобъемлюще не характеризуют его сущность и текущую миссию. Отделение государства от церкви, разграничение сфер их деятельности как важнейшее предусловие светского государства, очень часто толкуется как существование полной независимости и изоляции государства и религии друг от друга, а также состояний, исключающих взаимные связи. Подобное обстоятельство, в свою очередь, способствует восприятию светского государства как нерелигиозного или атеистического вида государства.

Важность адекватной оценки концепции светского государства подчеркивается в контексте взаимоотношений и взаимодействия проблем конституционно-правового статуса Республики Армения и религиозных организаций, а также Армянской апостольской церкви как национальной церкви.

Основной вопрос правовых отношений государства и церкви, как важнейшего фактора реализации принципа светскости государства, находится не только в центре внимания ученых в области юриспруденции и религиоведов, но и в сфере обсуждения широких слоев общества. Диссертацией обоснована та позиция, по которой светское государство – это такая форма организации и деятельности государственной власти, где признается функциональная обособленность духовных (религиозных) структур и органов государственной власти, наделение автономностью в сфере собственной деятельности с установленной законом порядке возможностью взаимодействия друг с другом в целях решения общественных проблем, а также гарантируется право на свободу мысли, совести и религии каждого, принцип светскости государственного аппарата и образовательной системы, недопустимость обязательного мировоззрения (идеологии), внедрения религиозных правил и догм в источники права, делегирования государственных функций духовным (религиозным) структурам, участия духовных деятелей в управлении государством. На основании изучения международного опыта и результатов сравнительного-правового анализа конституционно-правовых актов зарубежных стран диссертацией обосновано выделение некоторых свойств закрепления принципа светскости государств, таких как а) что принцип светского государства получил свое прямое закрепление в конституциях государств, б) что закрепление принципа светского государства в конституциях несло посреднический характер, в) что путем установления государственной или традиционной религии (церкви) была гарантирована

светскость государства. В настоящих условиях не надо толковать светскость государства как полное отделение церкви от государства, исключение имеющихся между ними связей, а следует придать значение тому полезному взаимодействию, которое будет способствовать эффективному решению общественных проблем.

VAHE ASHOTTOROSYAN

CONSTITUTIONAL-LEGAL CHARACTER OF THE REPUBLIC OF ARMENIA AS A SECULAR STATE: THEORETICAL AND LEGAL ANALYSIS

Competition for the degree of Candidate of Juridical Sciences in the specialty of 12.00.02 - "Civil Law". The defense of the dissertation is scheduled for March 24, 2018 at 12:30 p.m in a panel session of the Professional Council 041 of Jurisprudence of the Public Administration Academy of the RA of the RA Higher Certification Commission (8 Kievyan, 0028, Yerevan).

SUMMARY

The dissertation is devoted to the theoretical and legal analysis of the constitutional-legal problems of the concept of a secular state in the Republic of Armenia. The concept of a secular state is one of the most important achievements of the history of society. As a civilizational value, it has its own special place in the system of the foundations of the constitutional system of the Republic of Armenia and is interconnected with the rest of elements of the system. Without realizing the principle of a secular state, it is impossible to build either a full-fledged democratic state or a law-bound state. In this sense, the principle of the secular state as one of the foundations of the constitutional system has a fundamental role in the development and progress of the Republic of Armenia.

Today's approaches to the concept of a secular state do not fully describe its essence and current mission. The separation of the state from the church, the boundary delimitation of the spheres of their activity as the most important precondition of a secular state, is often interpreted as the existence of complete independence and isolation of the state and religion from each other, as well as states that exclude interconnection. Such a circumstance, in its turn, contributes to the perception of a secular state as a non-religious or atheistic type of state.

The importance of an adequate assessment of the concept of a secular state is emphasized in the context of the interrelations and interaction of the problems of the constitutional and legal status of the Republic of Armenia and religious organizations, as well as the Armenian Apostolic Church as a national church. The main issue of legal relations

between the state and the church, as the most important factor in realizing the principle of secularism of the state, is not only in the center of attention of scholars in the field of jurisprudence and religious scholars, but also in the sphere of discussion of broad sections of society. The dissertation substantiates the position by which a secular state is such a form of organization and activity of state power where it is recognized the functional detachment of spiritual (religious) structures and public authorities; the autonomy in the sphere of own activity, with the established by law possibility of interaction with each other for the purposes of solving public problems, and also guaranteed the right to freedom of thought, conscience and religion of everyone; the principle of secularism of the state apparatus and the educational system; the inadmissibility of compulsory world-view (ideology), the introduction of religious rules and dogmas into sources of law, the delegation of state functions to spiritual (religious) structures, the participation of spiritual figures in government of the state. Based on the study of international experience and the results of a comparative legal analysis of constitutional and legal acts of foreign countries, the dissertation justifies the identification of certain features of securing the principle of secularism of states, such as a) that the principle of a secular state was directly consolidated in the constitutions of states; b) that the consolidation of the principle of secularity in the constitutions had an intermediary character, c) that by establishing a state or traditional religion (church), the secularity of the state was guaranteed. In the present conditions, it is not necessary to interpret the secular state as a complete separation of church and state, the exclusion of the existing links between them, but it is necessary to attach importance to the useful interaction that will contribute to the effective resolution of public problems.